ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 209

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի, ***որոշում եմ.***

1.2021 թվականի օգոստոսի 04-ին, ժամը 15:00-ին հայտարարել կրկնակի մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար -(ծածկագիր՝ 1.2-1)

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ -(ծածկագիր՝ 3.3 1),

2. Կրկնակի մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացման և տեխնիկական սպասարկման լիազորությունները պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Լիաննա Մանվելյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ.հուլիսի 26
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 210
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ‹‹Վարչական իրավախախտումների վերաբերյալ›› օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 219-րդ, 245-րդ, 279-րդ, 283-րդ հոդվածի պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 42 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջների **որոշում եմ.**

1. ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, 1-ին փողոց թիվ 69/1 հասցեում քաղ. Ռոբերտ Քարամյանի կողմից առանց համապատասխան թույլտվության շինության կառուցման շինարարական աշխատանքներ իրականացնելու համար վերջինիս ենթարկել վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, որը պետք է վճարվի 900105231105 հաշվեհամարին տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում :

2. Պարտավորեցնել Ռոբերտ Քարամյանին օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունը:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Ռոբերտ Քարամյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Ռոբերտ Քարամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման ՀՀ ԱՆ Հարկադիր Կատարումն Ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. Հուլիսի 29
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
30 ՀՈՒԼԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 211

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

1Համայնքային սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր /07-062-0023-0002/ 0.06983 հա հողատարածքին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 3-րդ փողոց , 1-ին նրբանցք, թիվ 2/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021 թ. հունիսի 29
գ.Վերին Պտղնի